

# ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

## ԼՐԱԳԻՐ

### ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ENCYCLOPEDIÉ

(مجموعه علوم)

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 6

1898 ԱՊՐԻԼ 13

Ամեն ճեղի համար Տարեկան կանխիկ 50 դահ: Վեցամսեայ 25, իսկ  
հռամսեայ 35 դահ: Օգար երկրաց համար Տարեկան կանխիկ 35 Էրան:  
Թղրասարի ծախքը խմբագրութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գու-  
տաներէ բօսքի բուլ ալ կ'ընկողնուի 300 դրուցի սեղ 305 դրուց:

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ

ՏՆՕՐԼՆ

Ղ. ԲՈՒԼԱՏ

Վ. Գ. ԶԱՐԴԱՐՅԱՆ

#### ԲՈՎԱՆ ԳՆԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ — Ստուգարանական բառարան Գ:  
ԱՔԹԵՌԱ — Աղջկանց կրթութիւնը:  
Ն. ԹՕԳԱԹԼԵԱՆ — Ժողովրդական իրաւարանութիւն:  
ՔԱՐՈՂ — Թռչնորդին [վէպիկ]:  
Յ. ՃԵԼԱԼ — Գիտական քրոնիկ — Ոգելից ըմպելիներ:  
Ղ. ԲՈՒԼԱՏ — Շերամաբուժութիւնը Բասթէօնեան դրութիւնով:  
ԱՐԱՔՍ — Առտնին առողջապահութիւն — Ձայնը:  
ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏԸ — Արհեստական — Գիմացկուն փայլուն ջնարակ [վեր-  
նից] երկաթի պողպատի համար: — Երկաթը և պողպատը զոգելու  
[խայնամբիշ ընելու] փոշի:  
ՏԱՆՏԻԿԻՆԸ — Խոհանոցի բաժինը — Խնձորի ճաշ  
Մահազոյժեր: — Նուէր: — Աղքատախնամի նեղ ատկումը: Թղթակ.  
ցութիւնը Հանրագիտակի:

Հատը 40 փարայ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՆԻՆՈՂՈՍԵԱՆ

Կ. Պոլիս Չախմաքիլար եօզուռու Ջիւմայիլի Խան-Թիւ 28

## ՆԱԽԱԿԱԴՐՈՇՄ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ

Նամակադրողները գին մը արժեքով համար պարտին :

1. Նամակադրողներուն և ոչ սէկ մասը ոչ պատուած և ոչ փնասուած ըլլան ու կարելի եղածին չափ լաւ պահուած :

2. Նամակադրողները որքան որ հին տարուան մէջ (բացառութիւններ ալ կայ) գործածուած ըլլան այնքան աւելի կարժեն :

3. Մեզ կամ այլուր զրկելու համար պէտք է քաղջ ջուրի մէջ ձգել , զանոնք և ապա մաքուր լաթի մը վրայ մի առ մի դնել , որով կը չորնայ և երբ պահաւանի մը մէջ դրուի բոսթի ծախքը կէս առ կէս նուազած կըլլայ : Յաջորդաբար պիտի գրենք բուլերուն գլխաւոր տեսակներուն և նոցա արժեքներուն վրայ :

### Ապառիկ . . .

Ամսական կամ շաբաթական փոքրիկ վճարումով մը կ'ուզէք մատենադարան մը ընենալ անմիջապէս դիմեցէք Զարգարեան Գրատունը , ուր ամէն տեսակ գրքեր կը գտնուին , հին ու նոր հրատարակութիւններ , պատմական գրական , վիպասանական եւայլն եւայլն :

2. հին թերթերու հաւաքածոյներ , լրագրերէ պակաս թիւեր ունեցողները , կրնան իրենց ուզած թիւերը գնել մեզմէ :

Պատուաւոր երաշխաւորութիւն պահանջելի է , կանխիկ գնումի դեղջ :

★ ★ ★

Ամիսը 10 դր. Կիսին

վճարելով ուզած գրքերնիդ կրնաք առնուլ Զարգարեան գրատունէն ուր ամէն տեսակ վիպասանութիւնք , գրական գրքեր եւայլն կը գտնուի , 10 դրու չի վարձքով մը ամիս մը ամբողջ ուզած գրքերնիդ պիտի կրնաք կարգալ :

Պայման . — փոխարժէք մէճիտ մը վճարում և կամ պատուաւոր երաշխաւոր մը կը պահանջուի :

Ինչպէս կը տեսնէք վերագրեալներէն ամէն կերպ դիւրութիւն կ'ուտանք հաս-

արակութեան ընթերցասէր մասին համար , որուն ուշադրութիւնը կը հրաւիրենք , ալ չըսուի թող որ հայերէն գրքերը սուղ են և անմատչելի :

## ՄԼՈՒԿՆԵՐԷ ՄԻ ԶԱՐԶԱՐՈՒԻՓ

Մլուկները որ շատ աւելի կը գտնուին Գում-Գարուի կողմերը , սկսած են իրենց անտաննիկ ներկայութեամբ պատուել :

Մի նեղուիք ,

Դիմեցէք Խաչիկ Ֆէսճեանի գեղարանը , Լանկա Ալաճա Մէսճիտ Թ. Յ. , հոն պիտի գտնէք մլուկի փոշի Բ. , և միանգամայն ամէն գրպանի դիւրամատչելի :

## ՄԵՍ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԼԻՑ

Լ. ԱՐՄԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

4. Պոլիս Ֆեֆլեան խանի տակ թիւ 3

վաճառատունս պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ ամէն տեսակ թարմ դեղորայք . վերաբուժական գործիքները Անգղիական և Գաղղ . պատրաստ դեղեր , գծեակներ , գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը , յարմար գնելով , Լ. Ասլանեան և Ս. Էմիրզէ ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին , ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացնելու համար , մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրենք գաւառաց համար , որոնց կը զրկենք դեղորայք ամենայն արագութեամբ , թարմ և մատչելի գներով :

Զարաճճի մլուկներու և լուերու եւն . համար միջատասպան փոշի Poudre insecticide մեծաքանակ բերել տուած ենք ուղղակի Տարմացիաէն , որուն համար մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրեմք յարգոյ հասարակութեան :

# ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

## ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopedie

{مجموعه علوم}

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 6

1898 ԱՊՐԻԼ 13

ԱՅՈՒՆ

Տպարանի փոփոխութեամբ պատճառաւ բերթիս հրատարակութիւնը երկու օր ուսացած ըլլալուն, ներողութիւն կը խնդրեմք մեր ընթերցողներէն:

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

\*\*\*

Տ. ՅՈՎՀ. Ա. ՔՀՅ. ՀԻԻՆՔԵԱՐՊԵՅԵՆՏԵԱՆ

Գ.

Այս բաժնարանը՝ ստուգաբանական շահեկանութիւն ունենայ թէ ոչ, մեր գրական շրջափոխութեանց երեւոյթներէն մին կը բացատրէ. և այդու կ'արժէ որ զայն ուշիւ քննենք:

Ասկից յիշուին տարի առաջ գտնուեցան բնաձիւր յատկութիւններով օժտեալ անձինք որ շատ մը ուղիղ ժանօթութիւններու հետ հնարքներ գործածեցին իրենց գիտութեան թերին ծածկելու:

Խեղճ պատեւէներ, խիստ չըլլանք իրենց նկատմամբ. ի՞նչ ալ կրնային ընել երբ ժամանակին մեկնեալները փէշտի-

մալճեանի մը պէս մէկուն անգամ մարդը կեցին հասկնալու համար թէ, Ազամին գրախտին մէջ կերածը ի՞նչ էր(\*).

Ուստի ենթադրութիւնները իբրեւ ճշմարտութիւն ընդունիլ, մասնաւորէն ընդհանուրին հետեւութիւններ հանել, գիտութեան ցոյց տուած օրէնքը կամայական գրութիւններու շահել ու կանխորոշ եզրակացութեան մը յանդիլ, ահա այս էր այն ատենի գրագէտներէ շատին գիտումը:

Ալ ինչո՞ւ զարմանանք որ օրերով բանակութիւնները կերկարէին գիտնալու համար թէ հա՞ւ հա՞լիւն էլա՞նք հա՞լիւն էլ, ի՞թէ այն ատեն ջո՞ղ ակնցիներ ֆիզիզա Պօղոս վարժապետին և Չամուրճի պատուելիին կունակ կեցան, շատ անգամ զանոնք իրար ձգելով, հեռուէն գիտել է՞յ՞ ընել էր նպատակնին:

Այն բարեյիշատակ օրերու մէջ ուրեմն այն հանճարը որ չէր կրնար Գէորգ Դպրին և այլոց պէս հարգներու ստորնացուցիչ լուծը թօթափել, պէտք էր

(\*) Կ'ըսեն թէ պատասխանեց, «Մօ' գա-  
«ցէք ըսէք սըվոնց, ջոռ է հերեր, հասկը-  
«ցա՞ք ջոռ: Մէկը չըկայ հարցնող որ այսօր  
«Փէշտիմալճեանին կերածն ի՞նչ էր, կ'ուշտ  
«է թէ անօթի:»

անպատճառ վիճէր ու վրայ ելելու միջոց մը գտնէր, մէկ խօսքով բռնի խմտաակ ըլլար:

Իրաւ է որ այն ատեն ճամարտակելու առանձնաշնորհումը կ'ունենաւ, և երբ անգամ մը ամենուն աչքի սրղը կ'ուարէր, բերնէն ելած խօսքը գետինը չէր իյնար Magister dixit(\*):

Ճամանակն ալ, հետեւաբար, բնականցական խորհրդաւոր երեւոյթի մը տակ անոնց ազիտութիւնը պահ մը ծածկելէ վերջ, երբ ալ անոնք գրական հրապարակէն ի սպառ անհետացան՝ անոնց հոգեկան վիճակը պատկերացնող գրութիւններնին մեզ հասցուց:

Այդ ուշագրաւ մատենագրութեան մէջ կը գիտենք երեւակայութեան անվերջ խաղեր, անմեկնելի հակասութիւններ, բանաւարութեան յաճախակի բացակայութիւն, և հանճարին ակամայ կաշկանդումը որ հինէն նորին հասնելու համար փոխանցմանց ճիգեր կ'ընէ:

Մարդ որչափ կապչի երբ կը լսէ որ Սադան մէջ առանց այբի գլուխ մը գտնելու համար գիշերները լուսցնող գտնուէր է, և Հաւատարմէն մէջ ծայրէ ի ծայր քանի այբ ըլլալը գիտնալը իմաստութեան փորձաքարը կը սեպուի եղեր:

Մարդ որչափ կ'ափսոսայ երբ Անանիա ճիրակացւոյն թիւերու վեցհազարեակը խեղաթիւրուելով ակնեցի տխրեալուն ձեռքին մէջ կ'ախարդութեան գործիք մը դառնալը ստուգէ:

Նա մանաւանդ որչափ աւելի կը զարմանայ այն բռնազբօսիկ ստուգաբանութեանց վրայ՝ որ ատեն մը ամենուն բերնին մէջ կը վխտային. ով որ աւելի այլանդակ բացատրութիւն մը գտնէր ալ աւելի գովեստի կ'արժանանար:

Ո՛րք ես Մանդուկէ և քու համակրելի իմբազիրդ Հաճեան, որ մենէ առաջ այդ անանդի ստուգաբանութիւնները ծաղրեց ու ցուցուց թէ որչափ տղայական

է կարծել թէ բերան հանդիմանէ. և մարջ կամ որ զարէն և հանդիման կայ անդ էլէն կ'ելլէ:

Գառիմ ալ իր սովորական արարանութեամբ, անցեալ օր կ'ըսէր. դեռ ատենք ի՞նչ են, ատենցմէ աղէկը կայ. Կեանքը կը նշանակէ Կեանք. երբեք երբեք. Կեանքն էրէք զաւանջ. Իրան Իր է ան. Կեանքն էլ Կեանքն է. բայց անգամ մը խօսք հասկըցած չունի կը վաղէ կ'երթայ:

Նոյն բառախաղը ընողներուն վերջինը պէտք է մնայ Հիւնքեարպէյէնտեան՝ որ անպարարներու յատուկ ձեռքի դիւթէք շարժումով «Կեանքն» որովհետեւ կը հանէ, և դեռ ինչեր. Ձեռնածուն միայն յօժարակամ խաբուիլ ուղղին աչքը կը կապէ, բանասէրճեղը այնքան դիւրահաւան չեն:

Իսկ գալով ընթերցողին՝ շնորհակալութիւն համարել կուզէ, անիկա կարգացածը որոճալու ժամանակ ունի և պաղարեամբ կը պատճառաբանէ, ուստի դիպուածը և հրաշալին անբաւական են իրեն համար:

Սակայն Հիւնքեարպէյէնտեանի դիտական սկզբունքէ զուրկ ստուգաբանութեանը ոչ մեկնաւ պակսեցաւ, ոչ ալ դրամ խնայուեցաւ. Ձենք կրնար մեղադրել ունեւոր մարդիկ և ըսել թէ՝ դրագէտներու ձեռք չեն բռներ և անոնց գիրքը հրատարակելու ստակ չեն տար: Եթէ երբեք գանդաւորնք՝ անոնց խորհուրդ տուողներուն դէմ պիտի գանդատինք որ լաւ ընտրութիւն ընել տալ չեն գիտեր:

Գոնէ գրքին հրատարակման արդիւնքը այն եղաւ որ անկարելի ըրաւ դէպի վերացական և դէպի կամայական դրութիւնները անգամ մըն ալ ետ դառնալ. թող ըլլայ բացասական արժանիք, բայց վերջապէս այս ալ արժանիք մը չէ՝ Հիւնքեարպէյէնտեանի համար:

Իսկ եթէ գտնուին ոմանք որ մանրամասնութիւններ ինդրեն և վաւիաքին

(\*) Վարդապետն ասաց:

Հասկնալ թէ ի՞նչ ենթադրութիւններ  
իրբեւ : ճշմարտութիւն առաջ քշուած  
են այս գրքին մէջ՝ պիտի ջանանք յա-  
ջորդ յօդուածով մը բացատրել :

ՄԻՇՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

### ԱՂՋԿԱՆՑ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

1870 թուականը Գաղիացոց համար  
դժբաղդութեանց դարագլուխ մը ըլլալ  
կ'սպառնար : Այդքը իր մեծ մարդուն  
յանձնեց հայրենեաց բարեկեան մեծ  
ինգիրը : Թիէն, աղգային ժողովոյ նա-  
խագահ ընտրուեցաւ : Գաղիացիք՝ ի-  
րենց աչքը, իրենց հոգին, անոր վրայ  
կեդրոնացնելով սկսան պոռալ :

— Ի՞նչ վիճակի մէջ կը գտնուինք :

Թիէն, իր աղգակիցներու հաւաքա-  
կան ձայնին կտրուկ պատասխան մը  
տուաւ : պատասխան մը որ այնչափ մեծ  
էր, որչափ մեծ էր աղգին դժբաղդու-  
թիւնը, յաղթուած աղգի մը ցաւերը :  
Այդ պատասխանը իր արձագանքը պի-  
տի գտնէ ամբողջ դարերու մէջ, և ա-  
մեն դարու մէջ ալ յառաջդիմութեան  
նախաշաւիղն պիտի ըլլայ : Նա ըսաւ  
յաղթուած մարդոց :

— Պարոններ, եթէ կ'ուզէք գիտնալ  
թէ ի՞նչ վիճակի մէջ կը գտնուի Գաղիա,  
գացէ՛ք, աչքէ անցուցէ՛ք ձեր աղջկանց  
դպրոցները, հոն պիտի տեսնէք ձեր վի-  
ճակը :

Այս խօսքը ըստ արդիւն աղգային ժողովոյ  
անդամաց հոգիին ջիղերը մի նոր ելեքո-  
րական ուժով ցնցեց, անոնց առաջ մի  
նոր հորիզոնի սահմանները պարզեց,  
հորիզոնի մը՝ որոյ վրայ մտածած չէին  
երբեք, վասն զի ամենեւին չէին կար-  
ծեր թէ աղգի մը մեծութիւնը և յա-  
ռաջագիտութիւնը աղջկանց դպրոցնե-  
րու մէջ պիտի տեսնէին : Մեծն Թիէն  
իրաւունք ունէր, նա կ'ուզէր իմացու-  
նել թէ Գաղիացիք իր մօրը բազկացը

մէջ Գաղիացի կ'ըլլայ և անոր . դիեցու-  
ցած կ'ընթացի աղգային զգացմանց մե-  
ծութիւնն կը ջամբէ : Մօր մը կուրծքը,  
մօր մը զգացումը ի՞նչ դիւթական ոյժ  
մ'է կ'ըզէր, որ աղգի մը ամբողջ բարո-  
յական կեանքը իր հոգեքանական զգա-  
ցումներով կը սոգորէ ու կը ձեւա-  
կերպէ :

Ո՛ր են մեր աղջկանց դպրոցները .  
ո՛ր են անոնց դաստիարակութեան կեդ-  
րոնները . ո՛ր են անոնց բարոյական  
կեանքի սեղանները : Ժամանակ մը աղջ-  
կանց համար կրթական հաստատութիւն  
ներ ունեցանք, առանց աղգը գնահա-  
տելու այդ հաստատութեանց կարեւո-  
րութիւնը, առանց գնահատելու զանոնք  
ստեղծող անձնաւորութեանց անձնուի-  
րութիւնը, չի գիտցաւ անոնց սուրբ գոր-  
ծին զարկ մըն ալ տալ իր աշակցութեամ-  
բը : Բայց ինչո՞ւ չգիտցաւ : Կարծեմ,  
կարմրելով պիտի ըսեմ թէ մենք օտա-  
րամոլ ենք, մենք անեղի կ'ուզենք Հայ  
ընկերութեան աշխարհաքաղաքացի աղ-  
ջիկ մը նուիրել, քան թէ ճշմարիտ հա-  
յուհի մը :

Ահա այս պատճառաւ Մէղպոլքեան-  
ներ և իրեն նմանները կը յուսահատին,  
կը թուլանան և կը պատրաստուին իրենց  
դպրոցները գոցել աղգային կրթութեան  
արդիւնաշատ աղբիւրները ցամաքեցնե-  
լու դառն պարտաւորութեան մէջ գըտ-  
նուելով : Օտարամոլ ենք ըսի և կ'ուզենք  
մեր աղջկանց օտար կրթութիւն մը տալ,  
բայց այս մեր օտարամոլութիւնն ալ ան-  
հասկնալի է, եթէ կ'ուզենք օտարին  
նմանիլ, ինչո՞ւ անոր բոլոր արարքնե-  
րուն չի հետեւինք : Ե՞րբ տեսնուեցաւ  
Գաղիացի մը որ իր աղջիկը կրթելու  
համար Ոսկգլիացիի կամ Ալմանի մը դըպ-  
րոց յաճախել տայ :

Ուրեմն ինչո՞ւ մենք օտարին այս յար-  
գելի զգացումն ալ չ'օրինակենք, և  
մեր իգական սեռի բարոյական կեանքը  
մեր դպրոցներու մէջ չի կազմաւորենք :

Ամէն ազգ՝ օգնելու է ինք իրեն, ինք իրմով ապրելու է, ահա այս ոսկեղինիկ բաւականութիւնն է ազգութեան մը զարգացման և պահպանութեան ամենամեծ տարրը. այն ամեն ազգ ուր այս սուրբ սկզբունքէն կը հեռանայ, պարտաւորեալ է խզել, պատշաճիլ և միանալ այն տարրի հետ, որոյ սովորութիւնները և բարքը իւրացնելու անյաղթելի ձգտում մը կ'արտայայտէ: Երանի թէ սա սողերը ձայն բարբառոյ յանապատի ըլլալու գոյգոյգութիւնը չունենան, և բոլոր Հայերուն անմահական դիւրոկեայ Հայերու սրտին մէջ հակադիւրացիկ արձագանք մը յառաջ բերէ, որով ազգային կրթութիւնը՝ ճշմարիտ նպատակաւ ուղղութիւն մը առնելու շաղկին մէջ կրնայ մտնել:

ԱՄՅԵՌԱ

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Վարձատուն (մուծիր) ի՞նչ ձեւակերպութիւններ կատարելու պարտաւոր է իր վարձակալը (միւսթէմիր), պայմանաժամին լրանալուն, առնէն կամ խանութէն հանելու համար այն պարագային՝ երբ ի ձեռին ունի պաշտօնական պայմանագիր մը (րէսմի իմար մուգալէ լէնամէսի):

Պ. Նախապէս ըսած էի թէ, երբ վարձատուն պաշտօնական պայմանագիր մ'ունենայ, պայմանաժամին լրանալուն, առանց դատարանի դիմելու, կրնայ իր վարձակալը տունէն կամ խանութէն հանել: (Տես թիւ 1):

Թէ վարձատուն ի՞նչ տեսակ ձեւակերպութիւններ պիտի կատարէ և առ այս պէտք ունեցած պաշտօնաթուղթերը որո՞նք են: Ահա այս ամբողջ այս կետերը պիտի ծանօթացնեմ Պատ. բնութեցողաց:

Նախ ըսենք թէ վարձու մի պայմանագրերը տպուած են և ամէն տեղ հասնող քառասուն փարայի կը ծախուի: Հետեւաբար գրելու հարկ չի մնար. կը բաւէ միայն մէջը բաց ձգուած տեղերը երկուստէք դրուած պայմաններուն համեմատ լեցնել:

Վարձատուն այդ պայմանագրերէն երկու հատ կ'առնէ և մէջը տնուններին (վարձատու և վարձակալ), մականուններին, արհեստներին, բնակած տեղերին, ո՞ր Տէրութեան հպատակ ըլլալին, կալուածին տեսակը, գտնուած տեղը, ի՞նչ բանի համար գործածուիլը, վարձու մի պայմանաժամը, վարձագինը և պայմանագրոյն ստորագրուած օրուան թուականը նշանակելէ վերջ, մին ինք միւսն ալ վարձակալին ստորագրել կուտայ, ստորագրութեան տակը իւրաքանչիւրին համար քառասուն փարայի փուլ փակցնելով:

Եթէ վարձատուն վարձակալէն երաշխաւոր (քէֆիլ) առած ըլլայ, երաշխաւորն ալ պարտաւոր է ստորագրել վարձատունին քով մնալիք պայմանագրին տակ, ո՞ր նախապէս վարձագինին քանակութեանը համեմատ (մոքրու) կամ (ճիսպի) դրոշմաթուղթ կը փակցուի. այսինքն թէ՛ 20000 դրուէ տուելի վարձագին նշանակուած պայմանագրերու համար. 10 դրուէնոց մաքթու իսկ անկէ պակասներուն համար նիսպի դրոշմաթուղթ կը փակցուի:

Հետեւեալ ցուցակը նիսպի դրոշմաթուղթերու գործածութեան եղանակը դիւրացնելու համար յարմար դատեցինք հոս դնել:

| 1 դրուէ միջեւ 100 դրուէի համար 10 փր. դրուէ. |   |         |            |
|----------------------------------------------|---|---------|------------|
| 101 »                                        | » | 1000 »  | » 20 »     |
| 1001 »                                       | » | 2000 »  | » 1 դրշ. » |
| 2001 »                                       | » | 4000 »  | » 2 »      |
| 4001 »                                       | » | 6000 »  | » 3 »      |
| 6001 »                                       | » | 8000 »  | » 4 »      |
| 8001 »                                       | » | 10000 » | » 5 »      |
| 10001 »                                      | » | 15000 » | » 7½ »     |
| 15001 »                                      | » | 20000 » | » 10 »     |

Յետոյ վարձատուն պայմանագրոյն այդ երկու օրինակները կը ներկայացնէ կալուածին գտնուած տեղւոյն Թաղապետութեան շրջանակին (պէլետիյէ տախլէսի), ուր վարձագինոյն ամրոջութեանը վրայ 100ին մէկ ֆոնրարթո խարթր անուան տակ ծախք (խարթ) մը առնուելէ վերջ, (այդ ծախքին գանձուած ըլլալը նոյն քանակութեամբ դրոշմաթուղթ փակցուելով կը նշանակուի), պաշտօնեան դրոշմաթուղթերուն վրայ օրուան

թուականը և Թաղապետութեան կնիքը գնելով պայմանագրոյն պաշտօնական (ըէսմի) հանգամանք կուտայ (\*):

Յիշենք նաեւ թէ՛ վարձատու և վարձակալ պայմանագրոյն միմիայն երկու օրինակներուն վրայ պաշտօնական գրողմաթուղթերը կը փակցուեն և միւս օրինակներուն համար ամէն մէկուն հինգ զրուշ վճարուելով (մուգամվէլամ մուհարիթի) կողմէ բաւարկ կըլլան վարձու մի պայմանագրոյն ծախքերը վարձատուին կը վերաբերին:

Ըսած էինք թէ՛ վարձու մի պայմանագիր մը կրնայ պաշտօնական հանգամանք ստանալ պայմանագրոյ յատուկ գրողմաթուղթերը չը փակցուած պարագային ալ, պայմանաւ որ օրինակն տուգանքը վճարուի: Գործագիր Իշխանութիւնը (Իճրա տալիքսի) որուն կը դիմուի պայմանագրոյն գործագրութիւնը պահանջելու համար, նախ՝ հարկւորին մէկ պայմանագրի գրողմաթուղթի համար, և հարկւորին երեք ալ իւր տուգանք կ'առնէ, հետեւաբար Թաստիղ չեղած պայմանագիր մը վարձագնոյն ամբողջութեանը վրայ հարկւորին չորս գոմար մը վճարուելով կրնայ պաշտօնական ձեւ ստանալ (\*\*):

Այդ պարագային՝ Գործագիր Իշխանութիւնը պայմանագրոյն երկրորդ երեսին տակը հետեւեալ պարբերութիւնը գրելով պաշտօնական կնիքը կը զարնէ:

«Իշպու քօնթուրթօ վարագաւորն տաիթի աիտէսինսէն թաստիղ իթտիրիւմիւշ օլմաւորնտան սօւլայը .. զրուշլըդ պէտէլ իճարէ նիսպէթինտէ եիւզտէ իւշ հիսապը իլէ ... զրուշ ճէզաի նագաթի իթիթի փէ եիւզտէ պիր նիսպէթինտէ օլմագ իւզրէ ալընան ... զրուշլըդ քօնթրաթօ փուլը եափըշլըրըլարագ ալէլ սուսլ իպթալ իտիլ-

միշ օլտըղընը միւշիւր իշպու նիւսիսէյէ թահլէյէ գըլընտը»:

Կնիք

Խումարը ցիգամիյէ Իճրա տալիքսի

Հիմա կ'ենթադրենք որ վարձատուն պաշտօնական կամ պաշտօնական ձեւ ստացած պայմանագիր մ'ունի ձեռքը և պայմանաժամին լրանալուն՝ վարձակալը չուզեր վարձատուին կալուածէն ելլել:

Նախ՝ վարձատուն մուգամվէլար մահարիթի միջոցաւ զեկուցման (Թէպլիլ) թուականէն մինչեւ 15 օրէն ելլելու համար վարձակալին հետեւեալ եղանակաւ խորագրուած ազգագիր (Իթմարնամէ) մը կը խրկէ:

«Տէր Սա'ատէթ Մուգամվէլաթ մահարիլիլի մէմուրիյէթի պէշլէսինէ

«Տէր Սա'ատէթ տէ ... մահալլէտէ ... նումէրօլը միւթէսարըթ օլտըղըմ տիւքեանը, տէր սատտէթտէ ... մահալլէտէ ... նումէրօլը խանէտէ սաքին ... էֆէնտիյէ ... տէնէ միւտտէթլէ իճար էթմիշ օլտըղմտան վէ միւտտէթի իճարէ միւնգապիյէ օլմաշ օլտըղը հալտէ, հէնուզ միւսթէճիրի մէրգում թաիլիյէտէն իմթինա իլէտիկինտէն, իշպու իիթարնամէնին թարիթի թէպլիլինտէն իթիպարէն 15 կիւն զարփընա մէզքիւր տիւքեանը պիթթաիլիյէ թարափըմա թէպլիլ իտիլմէսինի քէնտուսինէ իիթար իլէմէքլէ պէրապէր աքսի թագաիրտէ իյճապ իտէն մուամլէյի քանունիյէսինէ իպթիտար օլընապիլմէք իւզրէ, իշպու իւշ նիւսիսէ իսթարնամէտէն նիւսիսէի ալիլիյէսինի հըֆզը վէ պիր միւսաւտաք նիւսիսէսին միւսթէճիրի միւսաիլէյի ... էֆէնտիյէ վէ տիկէր նիւսիսէսինին տաիթի թարափը աճիլիյէ թէպլիլի իտուսուը իսթիտա վէ իսթիրհամ օլընըր օլ պապսէ»:

(2 զրուշի փուլ) (թուական)

(ստորագրութիւն)

Եթէ այս ազգագրին զեկուցման թուականէն մինչեւ 15 օր վարձակալը խանութէն ելլէ, բնականաբար Քուրիշ ձեւակերպութեանց պէտք չի մնար: Հակառակ պարագային՝ այսինքն եթէ ունէ առարկութեամբ դարձեալ չ'ելլէ, այն ժամանակ, խանութին գտնուած տեղոյն Նախնական Դատարանին Նախագահին, վարձակալը խա-

(\*) Վարձու մի պայմանագրերուն դրոմաթուղթերը զոյգ զոյգ իրարու փակած են. մին՝ վարձատուին ստացրելիք օրինակին, իսկ միւսը՝ վարձակալին ստացրելիք օրինակին վրայ կը փակցուի:

(\*\*) Թաղապետական օրհանգիւցներն են որ վարձու մի պայմանագրերուն պաշտօնական ձեւ կուտան, եւ ասոր համար քան կամ իրանութիւն կալուածական տուրք նախանականէն յետոյ դրոմաթուղթեր կը փակցնեն: Շատեր այդ տուրքն առժամանակ ապագայ համար անպաշտօն պայմանագիր կը կնեն, որով վերջ տուգանքի կ'ենթարկուին:

նութեն հանելու համար (Թախլիյէ), վարձատուն աղերսագիր մը կուտայ՝ որ սասցես կը խմբագրուի:

«Տէր Սա'ատէթ Պիտայէթ Մահքէմէսի բի-յառէթը ալիսար ճանիպի ալիսին»:

«Միւտտէթի իճարէսի ... Թարիխտէ միւնգաղիյէ օլմուշ օլան Տէր սաատէթտէ ... մահալլէսինտէ ... նումէրօլու տիւ-քեանտա միւսթէճիրէն մուգիմ թէպաաի Տէօվլէթը ալիյէտէն ... էֆէնտի, տիւք-քեանըն Թախլիյէսինտէն իմթինայի իւզէրի-նէ քէնտուսինէ ուսուրի վէճէ քաղէ թէպ-լիլ իթտիրիլէն վէ սուրէթի տախի իւզու իսթիտանամէյէ մէրպուրէն թագալիմ գը-լընան իսթարնամէյին թէպիլգի թարիխին-տէն պու անէ տէկին 15 կիւն միւրուր իթ-միշ օլտուղու հալտէ, իմթինայընտա ըսար իթմիշ վէ տիւքեան տախի թախլիյէ իտիւ-մէմիշ օլմաղլա, տիւքեանը մէգբլւրըն պիթ-թախլիյէ թարաֆըմա թէպիլմի խուսուրը-նըն Իճրա տաիրէսինէ էմր ու հէվալէ պույ-րուլմասըն իսթիտա իյլէրիմ»:

(1 զրուշի փուլ) (Թուական)  
(ստորագրութիւն)

Ասոր, վրայ, նախագահը խնդիրը Գործա-դիր Իշխանութեան սենեակին կը յանձնէ, ուրկէ խրկուելիք պաշտօնեայք, ի պահան-ջել հարկին, ոստիկանութեան օգնութեամբ, վարձակալը խանութէն դուրս կը հանեն և վարձատուին կը յանձնեն:

Ն. ԹՕԳՈՒԹԵՆՆ

## Թ Ո Ռ Ն Ո Ր Դ Ի Ն

(Վեպիկ)

Անպատճառ արտասովոր բան մը պատա-հած է:

Զօրավարենց նահապետական տանը մէջ ընտանեկան ժողովի մը հապճեպ պատրաս-տութիւնները կը տեսնուին:

Մանաւանդ Մեծ պատի վերջի շարթուան Աւագ երկուշաբթի օրով ըլլալիք այդ ժո-ղովը յայտնի կը ցուցնէ որ Էսիան խնդրոյ մը համար պիտի գումարուի: Ետանը հան-գիտը վրդովող հազուադէպ պատահարնե-րէն մին ըլլալը դուշակել դժուար է:

Հետզհետէ կը համին հրաւիրեալները — ազգականները — տանը ամենամտ անդամ-ները, մեծ ու պղտիկ ամենն ալ:

Ժողովասենեակը իւր գեղջկական պար-զութեանը մէջ պարզատէրի աչքով գիտողի մը համար շատ սքանչելի է. գետինը ամ-րողջ հաստ և խառուտիկ կապերունը ծածկուած, պատերը և ձեղունը իրենց սի-րուն լերկութիւնովը կարծես աւելի հան-գիտ շունչ տանէր կուտանմարդուն. զարդ ըլլալով սենեակին ճակարտը կախուած է շատ հին պատկեր մը — Սուրբի պատկեր մը — որ ձիուն վրայ հեծուած քը և ձեռքի նիզա-կը հնագործան գօրավարի մը՝ մի քիչ կոշտ երեւոյթը ցոյց կուտան:

Օրհասական ճաշը պահուց կերակուր-ներով ըրած են. ձեռքը բիրանը լուսնովը չիտակ ժողովասենեակը կ'ուղղուի. ամէն անգամ իր տեղը գրաւած է ծալլապատիկ կամ ծնգաչոք նստուածքով մը. մէջերին ամենէն երիտասարդը երեսունը հինգէն պա-կաս չէ. մեծամասնութիւնը սկսնակ, մի-ջակ, տարեց և պատկանելի ծերունիներէ կը բաղկանայ: Ներկաները քառասունէն ա-ւելի են պակաս չեն:

Ամենն ալ գլուխին ծածկ խոհուն դէմք մը աւած են. մարդ շատ ծանրաշիւ պա-րագայի մը հանդէպ այդչափ խոհուն կ'ըլ-լայ. և մերթ ընդ մերթ դրանը կողմը ակ-նածական ակնարկներ կը նետեն յանցաւորի մը պէս յանկարծակիքի չի գալու համար:

Երիտասարդ մը նշանը կուտայ, ՌԻՇ:

Իւր ութսունամեկի որդիներով, վաթսու-նամեայ թոռներով, քսանէն մինչեւ քա-ռասնամեայ թոռնորդներով շրջապատուած, կորաքամակ, վեհաշուք, կուրծքին վրայ փռուած, ձեռն պէս ոպիտակ փառաւոր մօ-րուքով պատկառելի հարիւրամեկի մը՝ ձեռ-քի հաստ գաւազանին յենլով ծանրաքայլ ներս կը մտնէ:

Ամենը մէկէն քաքի կ'ելլեն:

Զօրավարենց տան նահապետը Պապա Սար-գիսը իրեն պատրաստուած տեղը կը բազմե-ցնեն:

Ծերունիի յատուկ միսմիս և անուշ նայ-ուածք մը կը շրջեցնէ ներկաներուն վրայ, որոնց տեսութենէն զգացած պատի հրճուանք մը իւր ծալք ծալք եղած դիմացը վրայ

ժպիտ մը կը նկատէ՝ ամէնքը իր զաւակները, ծլած ծաղկած:

— Նստեցէ՛ք զաւակներս: Աստուած հետերնիդ ԸԼՄՅ:

Կր. հնազանդին նախապետին հրամանին և իրենց տեղերը կը նստին, սպասելով բուն խնդրոյն սկզբնաւորութեան:

\* \*

Ամեն տուն իր շփացած զաւակը կ'ունենայ. Զորավարենց տան երես առած զաւակն էր Պապօ Սարգիսի Թոռնորդին:

Թոռնորդին անունն ու Սարգիս էր:

Սարգիս գիւղին մէջ մէկ հատիկ էր, ամենուն սիրելին, ամենուն բերնին չաքարն էր. անցած դարձած ատենը՝ երգիքներէն, դրան ծեղկերէն սիրտառնչող աղջկունք ի տես կը կայնէին. չի կար աղջիկ որ Սարգիսին համար ախ մը չի քաշէր:

Բարձրահասակ, կուրծքը դուրս, գեղեցիկաբոյժ, և շատ սիրուն. սեւ աչուկ, սեւ բնքուկ, լեցուն թշեր, կարմիր այտեր, սեւ պիսիքը նոր կուղայ. կարծես թէ Աստուած զ'նքը ստեղծած ատեն բան դուր չունէր, ուզ ծին պէս վրան աշխատել է, իւր բոլոր գեղեցկագիտական ճարտարապետութիւնը Սարգիսի վրայ փորձեր և յաջողքեր էր:

Տակաւին քսան տարուէ կար չի կար. սակայն իր համարը չըմակայ բոլոր գիւղերը տարածուած էր:

Շարաթը հազիւ թէ երկու գիշեր հայրենի տունը կը գիշերէր. միւս օրեր գիշեր ցորեկ տնէն դուրս կարմիր ձին տակը՝ լեւները, բլուրները, սարերը, ձորերը, դաշտերը ոտքին տակը կ'առնէր գեղէ՛ գեղ:

Ամեն գիւղ զատ զատ անուն կուտային իրեն. Կէծակ, Կաճուկրակ, Կրակուրոց, Ասլան, Անգաղար. հայ գիւղերէ չըմաւորուած յայնի գիւղ մըն ալ կար ուր՝ Նէսի պէլա կ'ըսէին իրեն. և իրօք ալ այդ գիւղին համար Նէսի պէլա եղած էր, ուր հայ փերեզակ մը կողոպտուելուն՝ Սարգիս քթերնուն բերքընուն բերքս էր ըրած կողոպտուելին, հանգիստնին աւրած էր, հազար անգամ զղջացուցած էր ըրածնուն վրայ. ասոր համար այդ անունը տուած էին իրեն:

Ամեն գիւղ իւր մէկ խօսքը երկուք չէր ընէր. ուր որ կրթար. ձեռքի վրայ կը պահէին զինքը: Ինք ալ շատ վեհանձն էր և ամենուն հետ շատ անուշ կը վարուէր:

\* \*

Ահա այս Թոռնորդին մէկ ծանրակշիւ արարքին համար ընտանեկան ժողով դուրսարկել պէտքը տեսած էր տան նահապետը:

Կրկնելու պէտք չի կար. ժողովակիւնները ամենն ալ գիտէին թէ ինչո՞ւ համար կանչուած էին:

— Ներս բերէք, կը հրամայէ նահապետը:

Կրակոտ Թոռնորդին դրանը դուրսը կայնած այդ հրամանին կը սպասէր. անսկիւն պէս ներս կը նետուէ և համարձակ քայլերով մինչեւ նահապետին քով կը յառաջանայ. ծնգի գալով աջը համբուրելէն ետքը սենեակին մէջտեղը կը կայնի:

Բնաւ երբէք յանցաւորի մը երեւոյթը չ'ունէր:

— Անուշ զաւակս, ըսաւ նահապետը, ըսելու պէտք չի կայ. գիտես թէ ինչո՞ւ կանչեցինք քեզ մեր առջեւ. նայէ անգամ մը չորսդիդ, օտար մը կայ մէջերնիս, մենք մեզի ենք. խնայանք թէ միտքդ ինչ դրած էս. ըսինք քեզի որ ադ մտքէդ ետ կենաս. լսողը ի՞նչ պիտ'ըսէ... գիտես որ ասանկ բան մը գաղտուկ չի մնար. աշխարհ արարատ պի'իմանայ. ասոր անոր բերանը պի'իշնանք... մեզք չէ՞. ամօթ չէ՞ մեզի համար... ինչո՞ւ մեր անունին լէքէ բերես. դուն տղայ ես, զաւակս, չես գիտեր ի՞նչ կ'անես. էկէ՛ ատ սէվտայէն վազ անցի՛. մենծի խօսք մտիկ արա՞. ետքը պի'հասկնաս ի՞նչ աղէկ բան է խօսքի պառկելը. մենք քու աղէկութանդ հազար կ'ըսենք աչք պտտցուր անգամ մը նայէ քու գէշութիւնդ ուզող մէկը կայ հոս... ըսել է բան մը գիտենք մենք ալ՝ մի՛ աներ կ'ըսենք նէ:

— Ես ալ ձեզի բան մը ըսեմ, ինծի դայ. լու (գայլի) աւետարաններ մի կարդաք. գիտէք որ միտքս բան մը գնեմ նէ ինչ ալ ըլլայ պնելու եմ. աս ալ ըսեմ որ ձեռքս չէ. հիմիկ միտք ունիմ խելք չունիմ... խելքս վրաս չէ:

— Կրէ՛լ է մեզ ամենքս պի կոչուես... պ

նոր ինչո՞ւն զարնուեր էս... մեր գեղը պահասութիւնը կա՞յ, հաւնածդ առնենք քեզի ո՞րը կ'ուզես, ըսա՛ւ:

— Ինձի պէտքը չէ, Աստուած տիրոջնուն օժտէ ամենն ալ:

— Սարգիս, զաւա՛կս, գիտե՞ս, շատ հեղքեղի պատմած եմ. ատեն մը ողորմած հոգի հա՛րդ ալ քեզի պէս խեւարան էղած ատենը հոռւի աղջկան մը կրակին ինկեր էր... անել ըլլալէն ետքը մեղայի եկաւ:

— Է՛հ, շատ աղէկ. ես ալ անել ըլլալէս ետքը մեղայի կուգամ:

— Ի՛նչ պ'անես նայինք:

— Ինչ անեմ նէ կ'իմանաք:

— Սարգիս, ինքզինքդ գետը նետես աւելի աղէկ է. խաղք մի աներ մեզի:

— Ալ հերիք է... պարապ տեղը բերան. նիդ մի յոգնեցնէք. թող տուէք իմ հալիս. ինչ ապուր ուտեմ թող ուտեմ... անգամ մըն ալ տանը շէմը ոտք կոխեմ նէ ներս մի առնէք զիս... ալ ըսելիք ունի՞ք:

— Արիւն քոյ ի գլուխ քոյ, ըսին ամենքն ալ աչքերնին լեցուած:

Ըսածնուդ պէս թող ըլլայ, ըսաւ թոռնորդին և առաւ քալեց:

Տեսէք ի՞նչ է եղեր թոռնորդին յանցանքը:

(Շարունակելի)

ՔԱՐՈՂ

## ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ



### ՈԳԵԼԻՑ ԸՄՊԵԼԻՆԵՐ

Առ հասարակ ամեն դասակարգի մէջ ոգելից ըմպելի գործածել սովորութիւն դարձած է. և այս սովորութեան ծագումը անցելոյն մութ խաւերուն մէջ կորսուած է. թէեւ հնարչութեան տիտղոսը նոյն հաւատին կը վերագրուի. Բացառութիւններն յարգելով կ'ըսենք թէ կան այնպիսի անհատներ, որոնք իրենց գործածած ըմպելիին ոչ թէ բաղադրութեան, այլ պարունակութեանը վրայ իսկ երբէք գաղափար մը չ'ունին, և որոնք ոչ նուազ թիւ մը կը կազմեն. Ահա այս անգէտ դասակարգին անըն-

չան բայց օգտակար ծառայութիւն մը մատուցած ըլլալու նպատակաւ է որ փափաքեցանք այս անգամ ոգելից ըմպելիներու քիմիական բաղադրութեանց և ազդեցութեանց մասին փոքր ի շատէ՝ ծանօթութիւն մը տալ:

Ոգելից ըմպելիները շատ տեսակներու կը բաժնուին, զորս մի առ մի աչքէ պիտի անցնենք, քիմիական պզտիկ բացատրութենէ մը վերջ:

Խմորեալ ըմպելիներու թորումէն յառաջ եկած մարմիններուն ալքով անուներ կ'ուտան. խմորեալ ըմպելի ըսելով կը հասկնանք՝ գինին, գարեջուրը և ատոնց նման ուրիշներ, որոնք խմորներու (\*) կամ մասնաւոր քիմիական հակազդակներու (րէաքթիֆ), պտղանշյշին (կլիքոզ) շաքարին, օսլային և խորշանիւթին (սէլիւրոզ), վրայ բրած ներգործումէն յառաջ կուգայ. Արդ՝ այս բացատրութենէն կրնանք հետեւցնել թէ՛ այն պըտուղները և տունկերը որ շաքար կամ օսլայ կը պարունակեն, անոնցմէ խմորեալ ըմպելիներէ ալքով կրնանք պատրաստել:

Թորումէ յառաջ եկած այս ըմպելիները, ինչ որ ալ ըլլայ իրենց ծագումը, բաց ի էթիլական ալքովէ, կը պարունակեն վերին ալքոլներ (ալքոօլ սիւբէրիօռ). Վերին ըսելով ընտրեւագոյն պէտք չ'է հասկնալ, ընդհակառակն, էթիլական ալքոլէն աւելի գէշ և աւելի վնասակար են. և վերին ըսուելուն պատճառը, սովորական ալքոլէն աւելի եռացման բարձրագոյն աստիճաններ ունենալնին է:

Գլխաւոր վերին ալքոլներն են Բրօքիլական ալքոլը որ 96° կ'եռայ, Պիթիլական ալքոլը 112° կ'եռայ, (Ամիլիք) օսլայական ալքոլը որ 132° կ'եռայ:

Այս ալքոլներուն իւրաքանչիւրին քանակութիւնը ոգելից ըմպելեաց տեսակին համեմատ կը տարբերի. էթիլական ալքոլը գլխաւորաբար գինիին մէջ կը գտնուի. բրօքիլական ալքոլը կը գտնուի մանաւանդ չանչերու (Ֆիալթէ) մէջ. պիթիլական ալքոլը յառաջ կուգայ խմորեալ մեղաներու (\*) թորումէն (մէլաս, շաքարի գործարաններուն

(\*) հմորիս (Ferment):

(\*) Մեղրաս:

մէջ չաքարը պատրաստուէն վերջը, կաթսային տակի մուրն է, որ կրնանք նմանցնել ուռփի, այսինքն՝ փէքմէզի)։ օսլայական ալքոլը (ալքոօլ ամիլիք) գետնախնձոր, սորեն, վարսակ, գարի և իրենց նմաններուն մէջ պարունակուած օսլան և խորչանիւթը, թիմիական հակազդակներու և խմորիտներու ներգործութեամբ, նախ չաքարի վերածուելէ վերջ, անոնց վերադառն խմորումէն և թորումէն յառաջ եկած ալքոլն է։

Բոլոր ալքոլները քոյն են, բայց մարմնոյն վրայ անոնց ներգործումը տեսականներուն համեմատ շատ կը տարբերի։ որքան իրենց եռացման աստիճանը բարձրանայ և բնածուխի մասնիկը աւելնայ, իրենց աւերիչ ազդեցութիւնը այնքան կը սաստկանայ։ էթիլական ալքոլները արդէն փնտաւեր և թունաւոր են, որովհետեւ իրենց շոգիացումը մարմնոյն մէջ չ'կրնար արագ կերպիւ կատարուիլ։ Բրօքիլական ալքոլը կը գրգռէ մասնաւորապէս մարտողական գեղձերը և երիկամունքները։ պիւթիլական ալքոլը միեւնոյն ազդեցութիւնը յառաջ կը բերէ և աւելին՝ վերնոտութեան սասանմունքներ (քօնվիւլզիւօն էքիլէքթիք) ալ կը պատճառէ։ Օսլայական ալքոլը (ամիլիք) ստամոքսի խիթեր երեւան կը բերէ, ուլիդը սպստկապէս կը գրգռէ և հետեւանքը կաթնուած կըլլայ։

Տր․ Լապոռ, այս տարբեր ալքոլներուն թունաւոր ազդեցութիւնը իրարմէ զանազանելու համար հնդկախոզին վրայ ըրած փորձերէն հետեւեալ եզրակացութեան յանդած է․ կռամ մը էթիլական ալքոլ, կամ կրկին անգամներ թորեալ հրապարակի ալքոլը կենդանիին ներարկելով, զուարթ թեթեւ և անցողակի գինովութիւն յառաջ գալը նշմարած է։ մինչդեռ միեւնոյն քանակութեամբ օսլայական ալքոլը կամ ոչ թորեալ հրապարակի ալքոլները ներարկելով յիշեալ կենդանոյն, վերնոտութեան տագնապներու մէջ մահը յանկարծական եղած է։

Տր․ Ֆէրէ աւելի չօշափելի եղանակաւ, այս տարբեր ալքոլներուն թունաւոր ներգործութիւնը ապացուցած է․ հաւկիթը էթիլական ալքոլի ազդեցութեան ենթարկելէն վերջ թխսելով, առաջ եկած վառեակները բնական ձեւէն երբեք տարբերած չեն, միայն թէ ուշ ծնած են․ յետոյ հաւկիթ-

ները վերին ալքոլներու ազդեցութեան տակ դրուելէն վերջ թխսելով, անոնցմէ տարբերակ հրեշներ միայն առաջ եկած են։ Այս դիւրամբանելի ապացոյցով կրնանք եզրակացնել թէ բոլոր այն անձինք, որոնք մոյթ եղած են ոգելից ըմպելեաց մասնաւոր ստորնագոյներուն, երբ ամուսնանան, վատաւորը և տկարակազմ զաւակներու ծնունդ կ'ուտան։ Նաեւ՝ ոգելից ըմպելիներու չափազանց գործածումն շատ տեսակ հիւանդութիւններ կը ծագին, որոնցմէ գլխաւորներն են մարտողական գործարանաց խանգարում և դժուարամարսութիւն, ասոնցմէ զատ նաեւ թոքախտ, սրտի, լեարդի, երիկամունքի հիւանդութիւններ և ամենէն աւելի նշանակելին, անկարողութիւն և ամլութիւն։

Բայց թորումով միմիայն ալքոլներ չեն որ կ'արտադրուին, այլ նաեւ կարգ մը բաղադրեալ մարմիններ, եթերներ, ալաէթիտներ, որք բացարձակապէս և ատոնցմէ ալ աւելի փնտաւար են։ Եթերները՝ վերին ալքոլներու թթուներու հետ միացումէն յառաջ կուգան․ ալտէհիտներն ալ, ինչպէս քացախական ալտէհիտը և փերքիւրօյր թեփի ալքոլ (քէքեք եաղը) ամենաթունաւոր և փնտաւար մարմիններ են։ 30 կռամ ֆիւրֆիւրօլը որ թեփի իւղին մէջ կը գտնուի և 60 կռամ քացախական ալտէհիտը մարդը կը մեռցնեն։

Հրապարակի վրայ գտնուած ոգելից ըմպելիներու գրեթէ մեծագոյն մասը խառնուած է ի վերեւ յիշուած նիւթերով, թէպէտեւ բուն ալքոլ էթիլիկը միւս փնտաւար նիւթերէն զատելու գաղափարը յղացած են, սակայն այս գործողութիւնը կատարելու համար երկար ժամանակի և մեծ ծախքի կը կարօտի, միմիայն մի քանի գործարաններու մէջ ի կիր կ'առնուի։

Գործածուած ոգելից ըմպելեաց մէջ նախապատուութիւնը, գինիին թորումէն յառաջ եկած ոգիներուն կուտան։ Գինին կը պարունակէ մեծաւ մասամբ ալքոլ էթիլիկի, վերին ալքոլներէն քիչ քանակութեամբ կը գտնուի իր մէջ, կը պարունակէ նաեւ ալտէհիտներու և եթերներու հետք միայն, ի մասնաւորի գինիի խնկաբոյրը (պուքէ տը վէն) կոչուած եթերը որ գինիին ունեցած

այն մասնաւոր արտփելի բուրումը յառաջ  
կը բերէ: Գնդողական այս ալքոլները և բա-  
ղակից այս գոյեղներն են որ թորումը մի-  
ջոցաւ կ'արտագրուին և օդին մէջ կը գլու-  
նուին:

Ուրեմն գինէն յառաջ եկած օդին, բացի  
էթիլական ալքոլէ միւս ցնդողական նիւթերն  
ալ կը պարունակէ, որ ոգելից ըմպելեաց  
փափկաճաշակ խնկարկունները շատ լաւ կը  
հասկնան այն մասնաւոր համը, որ միմայն  
գինէն յառաջ եկած օդինն սեղանին է:  
Եթէ օդին լոկ էթիլական ալքոլէ բաղկացած  
ըլլար, չառ հեռի պիտի ըլլար անոր համ  
ըլլալէ: Այն խնկեղոյները, ալտէնիտները  
և եթերները, որոնք ինչպէս բինք հազիւ  
զգալի քանակութեամբ օդին մէջ կը գլու-  
նուին, կարծես մեր քիմքը կը գրգռեն հա-  
ճելի համայնով մը, և կը գրգռեն զվեզ միւստ  
միջէ մեր կոկորդէն վար սահեցները:

Ոգելից ըմպելեաց կարգէն են նաեւ քօն-  
եակը, շաքարօդին (սու), կեռասօղի (քիրշ),  
տանձօղի, խնձորօղի եւ այլն, եւ այլն: Կ'ար-  
ժէ մի քիչ ասոնց վրայ տեղեկութիւն տալ:  
Քօնեակ. — Այս ըմպելին առաջին ան-  
գամ Ֆրանսայի Քօնեակ քաղաքին մէջ պատ-  
րաստուած ըլլալուն այդ անունով յորջոր-  
ջուած է:

Ճւարիտ քօնեակը պատրաստելու հա-  
մար, պէտք է ընտրենք և առնենք գինիին  
թորումէն յառաջ եկած ալքոլները և անոր  
բողակից մասերը: ասոնք մասնաւոր գու-  
նաւոր կաղնեփայտէ շինուած տակառներու  
մէջ որոշեալ ժամանակ մը կը պահեն, ալ-  
քոլը այդ միջոցին կաղնեփայտին դեղնաթոյր  
գոյնը, միանգամայն անոր համը և հոտը  
կ'առնէ: Եւ այս է քօնեակին պատրաս-  
տութիւնը:

Շաքարօղի. — Այս ալ մեղրասիւն խմորու-  
մէն յառաջ եկած ոգելից ըմպելի մ'է: Եւ  
մենէն ընտիրը ժամայիքի շաքարօղին է, և  
ինչպէս ի վերեւ յիշուած է, վերին ալքոլ-  
ներէն բրօքիլական ալքոլը, աւելի շատ կը  
պարունակէ: Այս ըմպելիէն շատ քիչ կրնայ  
գործածուիլ, աւելին կրնայ թունաւորել:

Կեռասօղի (քիրշ). — Կեռասներուն և ա-  
տոր նմանող պտղանոյշ պարունակող պտուղ-  
ներու հիւթերուն խմորումէն և յետոյ ծեծ-  
ուած կեռասի կուտերդէն հետ թորուելով,

յոռաջ եկած ոգելից ըմպելին է. և լիթրա-  
յին մէջ երեքէն մինչեւ տասը տոնթիկում  
բրօքիլական թթու կը պարունակէ և լեզի-  
նուչի համը ունենայուն պատճառն ալ իւր  
պարունակած պիւսզօիքի ալտէնիտն (\*) է:

(Շարունակելի)

Յ. ՅԵԼՍԼ

## ՇԵՆԱՄԱՐՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՍԹԵՆՕԵՄԱՆ ԴԵՐՈՒԹԻՒՆՈՎ

Կենդանարանները թաւարակնաց Թեփոքե-  
(յէթիտօղէն Նօթիւն) միջատներու  
կայքը գտած են շերամը, որ հին ատեն-  
ները որոշելու համար կը կոչէին զայն րթեթի  
րթուր (պնափքս մարի) և վերջերս ալ  
անուանեցին րթեթի մետաֆաթեր րթեթ  
(սեդիքսուիս մօթի): Կենդանարանական  
այս դասակարգին մէջ գրեթէ մարդու  
ուղղակի զգտակար եղոյր այս թիթեռն է,  
որուն բուն հայրենիքը Չինաստան ըլլալ կը  
կարծուի: Հին դարերու մէջ, Չինաստանէ  
դուրս Ասիական և Եւրոպական մեծ ազգե-  
րու անձանթ էր մետաքսակերտ կերպաս-  
ներու ճարտարութեամբ. և անոնց պատրաս-  
տութեան հարկաւոր նախնական նիւթին  
վրայ գաղափար իսկ չ'ունէին: Եւ որովհետեւ  
այն ատենները այդ ազնիւ կերպասներու  
վաճառականութիւնն ալ Չինացոց ձեռքն  
էր միայն, այս ներկու գլխաւոր պատճառնե-  
րով շատ սուղ կը ծախուէին անոնք, և մի-  
մայն թագաւորական և ազնուական մեծ  
անձնաւորութիւնները չքեղազարդելու կը  
ծառայէին: Շատեր հետամուտ էին, և չարա-  
չար կը յողնէին այդ կերպասներու շինու-  
թեան գաղտնիքը ձեռք բերելու, բայց և  
ոչ մէկը կը յաջողէր: Վեցերորդ դարու մէջ,  
երկու Յոյն կրօնաւորներ Չինաստան կը ճամ-  
բորդեն ուր զարմանօք կը տեսնեն թէ, իրենց  
հայրենակիցներուն այնչափ աքնաջան աչ-  
խատութեամբ փնտռած գաղտնիքին հերոսը  
փոքրիկ և աննշան թիթեռ մ'է: Անչափ  
ուրախութենէ խելայեղ կը փափաքէին զայն  
իրենց երկիրը ներմուծել. սակայն ի՛նչ օ-  
գուտ, երկնային պետութիւնը մահու պա-  
տիժ կ'սպառնար անոր հունտերը արտածել

(\*) Կնոքիսային մակնալիոյ:

փորձողին. բայց անոնք չի վհատեցան, և գտան միջոցը: Եղեգէ գաւազաններ առին, որոնց մէջը պարսապ կ'ըլլայ. լեցուցին զանոնք շերամի հունտերով, և իւր ձեռքի գաւազաններ ժամանակ մը գործածելէ յետոյ, անոնցմով վերադարձան իրենց հայրենիքը՝ Կ. Պօլիս. ուր տարածեցին այդ բարի մարդիկը շերամաբուծութիւնը: Կ. Պօլսէն՝ Պարսկաստան, Թաթարիստան, Հնդկաստան և Ճարոն տարածուած է հետզհետէ շերամաբուծութիւնը. թէեւ պատմագիրներէ ոմանք կը կարծեն թէ Ճարոնէ արտածուած ըլլայ ամէնէն առաջ շերամի հօնտը. ինչպէս և ուրիշներ ալ Հնդկաստան կը նկատեն՝ անոր բնածին հայրենիքը: Իսկ ոմանք ալ կը կարծեն թէ, յոյն կրօնաւորները ոչ թէ Կ. Պօլիս, այլ Պեղոպոնէս տարած են ի սկզբան շերամի հունտերը, և առաջին մշակութիւնը սկսած է Արքատիւի մէջ. որուն պարսէզները քիչ ժամանակուան մէջ թթենիներով ծածկուած են, և այս պատճառաւ այդ քաղաքը կոչած են յետոյ՝ Մօրէ կամ ըստ մեզ Մօրա, որ կը նշանակէ բրնձատաւ լատինական բարբառով:

Եօթներորդ դարու մէջ, Արարացիք Ափրիկէ ներածեցին զայն. և 8րդ դարուն մէջ ալ Սպանիա: 12րդ դարուն սկիզբները (1130ին) Սիկիլիոյ Թոմէ Բ. թագաւորը Բալերմօյի մէջ հաստատեց անոր մշակութիւնը, ուրկէ 13—14րդ դարու միջոցին Նաբոլի անցաւ և անկէ տարածուեցաւ ամբողջ Իտալիոյ մէջ: 13րդ դարու սկիզբները (1230) շերամը ներմուծուած է Ծոանսաի Գօնթա-Վենետիկ գաւառը, որ այն ատեն Վատիկանի իրաւասութեան տակ կը գտնուէր, և 1309ին Գլենման Ե. Պապը Ապինեօի մէջ տնկել տրւաւ առաջին թթենիները. ուրկէ վերջ Լուի ԺԱ. և Շարլ Ը. մեծ ջանքերով տարածած են շերամաբուծութիւնը Ծոանսայի մէջ, Կըստի թէ, Հանրի Բ. առաջին անգամ ըլլալով Ծոանսաի մէջ մետաքսէ գուլպաներ հագած է (1550ին): Անկէ վերջը Ծոանսական թագաւորները մեծ հոգածութեամբ կ'ընթացէին առաջ տանելու շերամաբուծութիւնը և մետաքսակերտ կերպաններու ճարտարարուեստին ալ մեծ զարկ մը տուին: 1700էն վերջը շերամաբուծութիւնը մետաքսեղէն ճարտարարուեստին հետ գրեթէ աշխարհիս ամեն

կողմը տարածուեցաւ, և մուտ գտնու մինչեւ Ամերիկայի խորերը. Շիլի, Պրագիլիա, Ռեբուպիք Աւստրալիէն, Գալիֆօռնիա, ուր օրըստ օրէ կը յառաջդիմէ, և այս ընթացքով ալ ապագային մէջ շերամաբուծութեան գլխաւոր կեդրոնը պիտի ներկայացնէ իր արգասաբեր հօշերու շնորհիւ:

Շերամին կենսաբանութիւնը. — Գարնան սկիզբը շերամի հունտին մէջ գործարանաւ կազմակերպ աշխատութիւն մը կ'սկսի առաջ գալ: Նախապէս դեղին, յետոյ թուր (էյմէր), և որ ամբողջ ձմեռը հերձաքարի (քարէտախտակ) գորշ (գըր, քիւլթէնկի) գոյնով կը մնայ, մէկ քանի երանգներու փոփոխումէն վերջ կրկին դեղին գոյն մը կ'առնու, և յետոյ ձերմակ: Ապրիլէն Մայիս երբ հունտին մէջի սերմը (ժէւմ) պէտք եղած քանակութեամբ տաքութիւն կ'ստանայ, ներքին հեղանուտները վերածծուելով, հունտերը (հաւկիթները) կը ճաթին, և որդերը դուրս կ'ելլան. որ այս միջոցին վեր ի վերոյ  $1\frac{1}{2}$  հազ. մեթր երկայնութիւն կ'առնեն և հազիւ թէ կը կշռեն  $\frac{1}{2}$ —1 հազ. կուամ: Այս թրթուրները հաւկիթէն դուրս ելլելուն պէս ուտելիք կը փնտռեն, և ամբողջ չորս օր աշխուժութեամբ կ'ուտեն: 5րդ օրը առաւօտէն ուտելէ կը դադարին, կը թմրին, կամ եթէ կ'ուզէք կը քնանան, և այդ միջոցին կը խորխոր (մորթը փոսել): Ասիկա առաջին խորխոր կը կոչուի, որուն հետ և կը վերջանայ առաջին տարիքը: 5—9րդ օրը կը տեւէ երկրորդ տարիքը, որ երկար թմրութենէ մը վերջը երկրորդ խորխոր կը լրանայ: Թրթուրը այս կերպով կը կատարէ իր երրորդ շրջանը 9—15րդ օրը միշտ խորխորով: Զորրորդ շրջանը կը լրացնէ 15—21րդ օրը չորրորդ և վերջին խորխորով. յետոյ կ'անցնի հինգերորդ տարեշրջանին որ 21—30րդ օրը կ'ընթանայ, թրթուրը հեղերու վրայ կ'ելլայ ուր իր պատեանը (խոզակը) կ'ստայ: Թրթուրը հիմա վեր ի վերոյ 10 հ. մեթր երկայնութիւն կ'առնենայ և կը կշռէ մօտաւորապէս 7—8 կուամ:

Ճիւղերուն մէջ առաջուց քանի մը անկանոն և հասար թելերով ցանցակերպ հիմարկութիւն մ'ընելէն վերջ կը քաշուի դէպ ի կեդրոնը, կծկելով կը գալարի և կառնէ ճիւղ պարտի ձեւ մը. և կ'սկսի իր մարմնոյն բո-

լորտիքը ոստայնեւ ստորին շրթունքին մէջ գտնուած կորզանէն (թեւ շինող գործի, հատտէ) արտադրուած թելերով իր պատեանը, թելերուն տրուելիք ուղղութեան և պատեանին ձեւին համար, ճարտարութեամբ կը գործածէ բերնին քով գտնուած շոշափուկները և թաթիկները: Այս կերպով թրթուրը կը շինէ իր պատեանը մէկ թելով մը միայն, որուն երկայնութիւնը 1,500 մեթրի կը հասնի, և հաստութիւնն ալ  $\frac{15}{1000}$  հզ. մեթրի սկզբն, որ լրանալու մօտ կ'ստա-

նայ  $\frac{7}{1000}$  հզ. մեթր, որուն 3,750 մեթրը կը կշռէ 1 կուամ:

Երբեմն՝ հիւանդոտ որդեր, և կամ իրարու շատ մօտ գտնուողներէն 2—3ը միանալով մէկ խողակ մը կը շինեն: Այս տեսակ խողակները այնչափ շատ կ'ըլլան, որչափ անոնց մշակութիւնը թերի և անխնամ ըլլայ. որ կարելի եղածին չափ ուշադրութիւն ընելու է, որովհետեւ համեմատաբար անոնք քիչ թել կը պարունակեն, և իրենց բաժանումն ալ դժուար կ'ըլլայ:



խողակին ոստայնումը մօտաւորապէս 72 Ժամ կը տեւէ, լրանալէն վերջը թրթուրը կ'ուռի, կը կծկի, և իր երրորդ անրակին վրայ խեղդում մը յառաջ գալով, ողնային (կոնակի) երակը կը տեսնուի մօրթին տակէն. բերնի գործարանները կը ձեւափոխին, մօրթը կը պատուի և կը զատուի, ինչպէս և

բերնի, շնչանօթի, եւայլնի ներքին մշակութիւնները (բերնի, քիթի, լեզուի, եւայլնի վրայ ծածկուած ամենաբարակ թաղանթը միւրքէօզ): Բոլոր այս թաղանթները, կենդանիին սողնակերպ շարժումներէն կ'իջնեն վարի ծայրը, և կծիծր (բւլիգալիտ) երեւան կուգայ նախ գրեթէ սպիտակագոյն, յետոյ

թուիս, որ հետզհետէ կը մթագնի:

18—20 օր շարունակ խոր թմրութեան մը մէջ կ'իյնայ կծիծը. և այդ միջոցին է որ ամենէն աւելի հետաքրքրաշարժ այլակեր պուրիւն մը կ'ստանայ. իր փալիւլուն մորթին տակէն զգալապէս կը տեսնուի նորակազմ թիթեռնիկին բողկակները (անթէն), թեւերը և տոտիկները: Ընդերային (պաղըրսաք) կազմածը կը կարծնայ. և այն ատեն ալ մորթը կենդանիէն կը զատուի, կը պատրուարի և կծկտելով դէպի գլուխը կը քաշուի և թիթեռնիկը երեւան կ'ուզայ. բայց միշտ իր պատեանին մէջ: Սակայն շնորհիւ մասնաւոր հեղուկի մը, որ թիթեռնիկին բերնին մէջ հաստատուած փոքրիկ գեղձի (պէզ) մը արտաստումն է, խողակին մէկ տեղը տակաւ կը թրջէ, թեւերը դրուագող շնարակը (վերնիճ) կը հալեցնէ, և ատանց պատռելու և թեւերը կտրտելու, ուշիւ կը հեռացնէ, կը սպրդի դուրս գողգոջուն, թեւերը տակաւին ինքնիւ վրայ ծալուած, ամբողջ մարմինը խոնաւութեամբ թաթաղուն կը տատանի, բայց շատ չ'անցած կը չորնայ, թեւերը կ'արձակուին, և միջատը այլևս կատարելագործեալ կը թռչտի նուազուն թրթռումներով. այս վարկեանէն սահմանուած է այլևս բնութեան վսեմախորհուրդ գործը գլուխ հանելու. և կ'զբաղի միմիայն իր ցեղը սերնդաւորելու:

Արդէն՝ պատեանէն դուրս ելած պահուն, էգ թիթեռնիկը իր ձուարանին մէջ պատրաստ հաւկիթներ ունի, որոնք զուգաւորութեան ատեն արուին սերմը ստանալով կը բեղմնաւորին: Զուգաւորութիւնը կը տեսնուի հանրապէս 24 ժամ: Ուրկէ մէկ քանի ժամ վերջը էգը կ'սկսի ձուածութեան, որ կը լրանայ մինչեւ 3 օր, արտադրելով 300—700 հաւկիթ: Գաղափար մը ունենալու համար այդ հաւկիթներու մանրութեան և թեթեւութեան վրայ, կը բաւէ կարծեմ, եթէ ըսեմ թէ 1 կռամի համար, — տեսակին համեմատ — 1200—1500 հատ պէտք է: Զուածութիւնը լրանալէն յետոյ, միջատին մարմինը կը չորնայ, 30—40 օր իւր թրթուր ապրելով, 18—20 օր իւր կծիծ և 5—8 օր ալ իւր թիթեռնիկ. որ ընդ ամենը կ'ընէ վերի վերոյ 2 ամիս. և կը մահանայ այսպէս առանց իրեն յաջորդող սերունդը տեսնելու:

և կը յանձնէ զայն բնութեան ճարտար և հոգածու ձեռքին:

(Շարունակելի)

Լ. ԲՈՒՍ

## ԱՌՏՆԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

### ԶԱՅՆԸ

Տղայոց դաստիարակութեան մէջ՝ ընդհանրապէս ձայնի մշակութիւնը զանց կ'առնուի, մեր սիրելի և անմեղ սղտիկներուն ոչ արտասանութիւն կը սորվեցնենք, ոչ շունչ առնել և ոչ ալ կ'ուղղենք ձայնի թերի ելեւէջները: Գիտէք ի՞նչ է հետեւութիւնը: Այն ձայնը որ յատակ է, որ փայլուն է և որ լաւ ապագայ կը խոստանայ եթէ չի մշակենք կը կորսնցնէ ամեն ինչ:

Ձայնը մեր ընտանեկան պէտքերէն մէկն է, գիտեմ թէ՝ ձեզմէ շատեր քմծիծաղով մը պիտի կարդան վերի պարբերութիւնը... Բայց չէ՛, այնպէս չէ՛. ըսէք տեսեմ հիմա, ո՞ր ծնողք հաճոյք չ'զգար, երբ առօրեայ աշխատութիւններէն յոգնած ու պարտասած, երբ իրիկունը ուզէ հաճոյալի ժամանց մ'ունենալ և իւր սղտիկները իւր քով ժողվելով անոնց անմեղունակ և քաղցր ձայնը լսէ, ըսէ՛ք տեսեմ, իր տքնութիւնը վարձատրուած չ'ըլլա՞ր. և մանաւանդ ըսէ՛ք, երբ ձեր սիրելի ամուսինը, եղբայրը կամ հայրը, երեկոյին վերադառնան իրենց առօրեայ կեանքի աշխատութիւններով բեռնաւորուած, երբ զան հանգչիլ բազմոցին անկիւնը, և այն ատեն եթէ դուք հեշտալուր ձայնով մը անոնց քովիկը գեղգեղէք, արդեօք մեծ հաճոյք մը չի պիտի պատճառէք իրենց, և շատ անգամներ, մինչեւ իսկ անոնց մոտտանջութիւնը պիտի փարատէք, այնպէս չէ՞: Ընտանեկան սղտիկ հաճոյքներ՝ որոնք ձեր բոյնիկին երջանկութիւնը կրնան ապահովել:

Երբ կ'ուզենք մեր սղտիկներուն դաշնաւ կահարութիւն սորվեցնել, ինչո՞ւ չենք ուզեր միեւնոյն անգամ ձայնը մշակել, չէ՞ մի որ ձայնը, դաշնակին կենդանի արձագանքն է:

Տբ. Սանթրուս ճայնի վրայ կատարած հետաքրքրաշարժ և շահեկան փորձերէն հետեւեցնելով կ'ըսէ թէ, այդ կենդանի նուագարածը որ հովին ազդեցութեան տակ թրթռացող լարի մը պէս զգայուն է, մասնաւոր նիւթերու ազդեցութեան տակ կը փոխէ իւր ելեւէջները, իր թրթռումը, թոյլը, եւայլն:

Այսպէս երբ խաչափողի մէջ, շոգեհան գործիով մը (վաքօրիզաթէօն) հոտատու նիւթերու խկութիւններ զրկենք, բոլորովին հետաքրքրաշարժ փորձերու հանգիստեան պիտի ըլլանք:

Ենթադրենք թէ՝ փորձուելիք հեղուկը, անժելիք (մէլէք ջիջէյի) կոչուած բոյսին ըմպելիի ըլլայ: Երբ անոր շոգին փորձի ենթարկելու անձը ծծէ, առաջին անգամուն իւր ճայնը 3 աստիճան կ'իջնէ: որոց երկուքը ցած և մին բարձր:

Միւսները տակաւին բաւական յստակ կը մնան, երկրորդ ծծմամբ ելեւէջները յոռի հնչիւն մը կը հանեն, և չորս նոր ճայնի աստիճաններ կ'իյնան, և երրորդ ծծմամբ կը նուազին: Քառորդ ժամու հանգիստէ մը վերջը, ճայնը իւր բնական վիճակը կը վերստանայ:

Եթէ անիգէթին ըմպելին է. առաջին ծծմամբ, թէեւ հաճելի տաքութիւն մը կը զգացուի, սակայն 8 աստիճան կը կորսուի, 6ը ցած, 2ը բարձր. երկրորդ ծծմամբ, բոլորովին կը նուազի, կէս ժամու հանգիստէ մը վերջը, ճայնը իւր յստակութիւնը կը վերստանայ: Օշինդրն (ապսէնթ) ալ միեւնոյն արդիւնքը յառաջ կը բերէ: Այս փորձերու մէջ, ալքօլի ներգործութիւնը, իբր աննշան կը նկատուի, միեւնոյն աստիճան ալքօլ մթարունակող ըմպելիներ, կրնան տարբեր արդիւնքներ յառաջ բերել, այսպէս քիւռասօն ճայնի ուժգնութիւնը և տարածութիւնը կ'աւելցնէ, մինչդեռ անիգէթը զայն կը սահմանափակէ օշինդրի պէս: Միեւնոյն գիտողութիւնները ալքօլական երփնաջութերու (թենթիւռ) համար: Կնդրուկի (ասըլպէնտ) երփնաջութը, առաջին անգամ ծծելով ճայնը 2 աստիճան կը բարձրանայ, երկրորդին՝ ճայնի նոր աստիճան մը կ'երեւի, միեւնոյն անգամ ճայնը աւելի հնչիւն, եւ աւելի ուժգնութիւն մը կ'ստանայ երրորդ

ծծմամբ ճայնը սեւէ փոփոխութիւն չի կրեր: Թօլիւի երփնաջութը բոլորովին հակառակը յառաջ կը բերէ, ճայնը կը ծածկուի որոշ եղանակով մը, երկրորդ ծծմամբ ճայնը կը քողարկուի և 8 աստիճան կը կորսնցնէ, 3 ցած, 5 բարձր. երրորդ ծծմամբ, վերին աստիճանները կատարելապէս կը մօտին, և ճայնը կէս ժամէն իւր նախկին վիճակը կ'ստանայ:

Խայծղանի (քաթուան) երփնաջութը, հաստարիւմ իւր անուան, որ ճայնի համար պատուական դեղ մը նկատուած է, ճայնը ասով 2 ցած աստիճան կ'ստանայ, և խստութիւնը կը տկարանայ. երկրորդ ծծմամբ 2 նոր աստիճաններ կ'երեւին, երրորդ ծծմամբ ստացուած ճայնի վերին աստիճանը, իւր ուժգնութիւնը և ընդլայնումը կ'աւելցնէ:

Այսպէս ըստ հաճոյս կարելի է այս փորձերը փոխել, և տարբեր նիւթերով եւս կատարել, բայց անշուշտ ուրիշ շատերու պէս այս մասին ալ անհատական նախատրամադրութիւն և ընդունակութիւն պէտք է, որով առանց վարանելու կարելի չէ ենթադրել թէ ոեւէ մէկու մը վրայ փորձուածը կարելի ըլլայ ամենուն ալ յարմարիլ, սակայն տարակոյս չի կայ որ, վերոյիշեալ փորձերէն ամեն ոք և ի մասնաւորի երգողներ և ատենախօսներ կրնան օգուտ քաղել, և ի պահանջել հարկին ալ իրենց ճայնի աստիճանին ուղած դրօշմին տալ:

Եւ դուք ալ, երբ ձեր ճայնի լաւ պահպանման նախանձախնդիր էք, զգուշութեամբ որոշեցէք և յարմարեցէք ձեր նպատակին, գործածելիք ըմպելիներնիդ:

ԱՐԱՔՍ

## ԱՐՇԵՍՏԱԿԱՆ



Դիմացկուն եւ փայլուն սեւ ջնարակ (վեռնիֆ) երկաթի եւ պողպատի եամար

Երկաթէ և պողպատէ (չելիկ) առարկաներու սեւ փայլուն դոյն մը տալու համար հետեւեալ միջոցը կը յանձնարարուի

Առէք 10 մաս բեւեկնի խկութիւն (թիթմէնթի րուհր) և 1 մաս ծծումբ (քիւքիրտ) մաղմաղ կրակի վրայ հալեցուցէք, որ թխա-

գոյն (Էսմէր) իւր մը կ'ըլլայ: Այս իւրով օծեցէք ներկելիք առարկաները և տաքցուցէք ալքոլի (խալիթօ) լամպոյի մը վրայ, կամ փողոցի կաղի վրայ, որով կ'ստանաք խիտ փայլուն սև քնորակ մը, միանգամայն ղիմացկուն:

\*\*\*

Սեկաքը և պողպատը գոյեկու (խայնարմիշ բնույտ) փոծի:

Շատ անգամներ իրկաթագործները մեծ մոտատնջութեան մէջ կը մփնջն երբ հարկ ըլլայ ձուլածոյ պողպատը (սողոք չէլլի) ինկիլիգ չէլլի) երկաթի փակցնել, կամ որ նոյնն է երկու ձուլածոյ պողպատ իրար միացնել: որովհետեւ իրար փակելու համար մետաղները պէտք է այն առտիճան տաքցնել որ, ծայրերին հալելու առտիճանին մէջ գոհուի: բայց երբ ձուլածոյ պողպատները շատ տաքնան կ'այրին, և այնուհետեւ այլ եւս գործածելի չ'են ըլլար: Հետեւեալ փոշին գործածելով կարելի կ'ըլլայ դիւրութեամբ և առանց պողպատը այլայլելու փակցնել:

Երկաթի կամ պողպատի խարտուկ (Էյէն-թի) 500 կում  
Սեկերոսակ (Թեմէքետար) 500 »  
Ռեալին (ռէչինա) 50 »

ԱՐՈՒԷՍԱԳԷՏԸ

## ԻՈՂԱՆՈՅԻ ԲԱԺԻՆԸ

\*\*\*

Խնձորի ցմուռ

Առէք կակուզցած 20 հատ խնձոր, ստկեցէք և մատերու բաժնեցէք: միջուկը հանելով բարակ բարակ կտրեցէք, և սանի մը մէջ դրէք: աւելցուցէք վրան 60 կում շաքար, քիչ մը դարձնիկ, (Թաւջին) քիչ մը ջուր և լեմնի մը արտակելու (վրայի բարակ դեղին չօփր), մազմազ կրակի վրայ եփեցէք մերթ ընդ մերթ փայտէ գգալով մը խառնելով և ճմուռեցէք մինչեւ որ խնձորները հալին: Աւելցուցէք այժմ 60 կում կարագ և լաւ մ'եփեցէք մինչեւ որ ինքզինքը քաշէ: առանց սակայն տակը առնել տալու:

Հացի փորը շերտ առ շերտ կտրելով մանր

քառակուսիներու վերածեցէք, և կարագ իւրի մէջ ստակեցէք: որոնցմով առանց բաց տեղումներ թողելու կը դարդարէք ափսի մը յատակը և կամ եթէ ունիք ճմուռի (շաւթ) կողպարի մը յատակը և այնպէս ափսէին եզերքներն ալ մինչեւ վերը շարեցէք:

Յետոյ մէջտեղը որ բաց մնացած է, լեցուցէք վերոյիշեալ խիւսանոյշը (Էզլէ) և երեսը ծածկեցէք խիտ բազակ կտրուած հացի փորի չերտերով — առանց ձախն իւրի մէջ կարմած ըլլալու — և դրէք փուռին մէջ, ուր պէտք է մնայ 20 փայրկեան կամ մինչեւ որ երեսը կարմրի: Հանեցէք փուռէն այն ատեն և կորզեցէք կլոր պնակի մը վրայ, ու չի պաղած պատուականապէս կերէք:

ՏԱՆՏԻԿԻՆԸ

## ՄԱՀԱԳՈՅԺԵՐ

Ծանօթ փաստարան նաղարէթ էֆ: Շահպազ շարթուս մէջ մեռաւ, խոր սուգի մէջ թողնով իր Սյրին և զաւակները և փեսան:

Շահպազ էֆ. կեսարիա ծնած իր ինքնաշխատութեամբ յառաջացած, երկար ատեններ ազգային պաշտօններ վարած էր, և ամեն ատեն իրեն կէտ նպատակի ըրած էր լաւ ու գեղեցիկը:

Իր զաւակաց կատարեալ կրթութիւն մը տուած էր, որոնցմէ հէգ լեւոնիկը տարի մը առաջ մեռաւ, խոր կերպով խոցելով իր հայրիկին սիրտը:

Ս'եր ցաւակցութիւնները կը յայտնենք իրեններուն:

\*\*\*

Յաւալի կորուստ մ'ալ ունեցաւ Ազն. Տր. Շահպազ էֆէնաի, այն իւր պղտիկ աղջիկը սիրուն երախայ մը, որ թուահրեշտակներու կարգին մէջ, վշտացնելով իւր ծնողաց սրտիկը:

Ս'մեղուկ աղջկան յուղարկաւորութիւնը շքով կատարուեցաւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ ի բերաւ:

Խմբագրութիւնս իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Տէր և Տիկին Տր. Շահպազ էֆէնաի:

## ՆՈՒՆԵՐ

Առաջին անգամը ըլլալով ուրախութեամբ կը ծանուցանենք որ Զմիւռնիոյ աղգայիններէն Միհրան էֆ. Ն. Միքայէլեան բարեհաճած է նուիրել մէկ տարուան մը «Հանրագիտակ» Գըրգ-Աղաճի աղգային վարժարանին:

Այս նուէրը կ'արձանագրենք սիրով և լիայոյս ենք թէ ուրիշներ եւս պիտի ուզեն հետեւիլ Միքայէլեան էֆէնտիի օրինակին, մեր շնորհակալութիւնը հրապարակաւ կը յայտնենք իրեն:

## ԱՂԲԱՏԱԽՆԱՄԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ

Կիրակի բերա Գօնգորտիա Թատրոնին մէջ տեղի ունեցաւ ինչպստ Գում-Գարուի Զորից թաղից Աղքատախնամին ներկայացումը մեծաւ յաջողութեամբ, ներկայ էին ականաւոր անձնաւորութիւններ և Թատրոնին մէջ տեղ չէր մնացած բնաւ, օթեակները լեցուած էին, խաղն շատ բարոյալից և յարմար նպատակին: Մնակեան խումբը շատ յաջողութեամբ ներկայացուց Երկու որբերը:

Սնկարելի է հիացումով չը յիշատակել Կարգադիր Մանախումբի ազնիւ երիտասարդներու ջանքերն, որոնք գիշեր ցորեկ տքնեցան սոյն յաջողութիւնը ձեռք բերելու համար, անհուն շնորհակալիք իրենց:

Զուտ հասոյթ կը կարծուի իբր 80 ոսկի:

## ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

ԻԶՄԻՐ. — Մ. Ն. Մ. — ստացանք նամակիդ: Թերթերը կը ղրկուին Ձեր հարցումները կը հրատարակենք:

Թիւ 8 — Նուազ տարածութեամբ հողի վրայ ի՞նչ մշակելու է որ տէրը օգտուի:

Թիւ 9 — Փաթաթէսը ինչպէ՞ս հասցնելու և ձուան ալ անշնաս պահելու կերպը (պատասխանը կրնաք գտնել Բիւզանդիոն թիւ 439):

Թիւ 10. — Հողը կապոյտ կաւ և ամառը տաքին ճեղքուող վայրի և անկուտ խաղողի տունկերը կրնա՞ն փնասուիլ ֆիլոքսէրայէ, երբ որթը զօրաւոր, տեղւոյն գիրքը տապան այսինքն 2 մէթր խորութեան մէջ ջուր գտնուի և խոնաւութենէ յառաջ գալիք փնասների առաջին առնելու համար, եթէ այգիին չորս կողմը իրամիւս բացուած լինին, և նա մանաւանդ եթէ ձմռան անձրեւներով լեռնէն իջած ջրերով, մի քանի ամիս դաշտը ծովու պատկեր մը ներկայացնէ: Ի՞նչպէս կ'ըլլայ:

Թիւ 11 — Յ. Արսլանեան. — Գոնեակներու տեսակներն և աստիճաններն խիստ շատ ըլլալով ամեն դասակարգի անձ իւր կարողութեան և քսակին ներած չափով կրնայ գոնեակ մը գնել, այլ սակայն դարմանալի բան, ոչ ծախողը, ոչ գնողը և ոչ զայն դործածողը (բացառութիւն հարկաւ կայ) գիտէ և կը ճանչնայ զայն. իր անունը գրաւական մը դարցած է, մինչեւ իսկ դեղագործ բարեկամներու կարծիքներն գոնեակի մասին իրարմէ կը տարբերին և իրարու հակառակ են:

Ուստի կարծէ տէր խմբագրապետ, որ Հանրագիտակի միջոցաւ գոնեակի բաղադրութեան և պատրաստութեան վրայ ձեր տեսութիւնը և դիտողութիւնը պարզէք և միանգամայն ցոյց տաք միջոց մը դիւրաւ գտնադանելու լաւ ու ընտիրն՝ յոռի և գէշ տեսակէն որոշելու: Եւ եթէ կարելի է, ի՞նչ բանի օգտակարութիւն ունենալն ալ պարզէիք, որով այդ օտարին ապրանքը դնած առնենիս. գոնէ գիտնայինք ու ճանչնայինք անոնց տեսակն և աստիճանը. և զայն իբրեւ կազդուրիչ ըմպելի դործածած առնեն, աւելի ենթակայ չընէինք մեր մարմնոյն կազմութիւնը պարզ ալքոլ ազեւտալի հետեւութեանց և իր կարծեցեալ օգտակար հանգամանաց հակառակ աւելի փնասելով անոր:

Հանրագիտակի Յրդ. Թիւն սպառած ըլլալով անոնք որ մեզ կը բերեն, փոխարէն կ'ստանան Հանրագիտակի նոր թիւէն:

ԱՐՏՕՆԱՏԷՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ




LESSIVE MAGIQUE

ԼԷՍԻՎ ՄԱԺԻՔ

ԱՌԱՆՑ ԿՐԱԿԻ ԵՒ ԱՌԱՆՑ ԱՃԱՌԻ ՃԵՐՈ ԱԿԵՂԻՆԱՅ ԼՈՒԱՅՈՒՄ

Դիւրութիւն — Մաքրութիւն — Խնայողութիւն



ԼԷՍԻՎ ՎԷՆՈՒՍ

Դադողայ կառավարութեան հաստատութեամբ արտօնագրեալ ա ռժաբ եւ ոսկի միտայ  
ցերու արժանացած

Սոյն հրաշալի նոր գիւտով, ազատեցէք այլ եւս յոգնութիւններէ, ա-  
ւելորդ ծախքերէ ու ժամանակի կորուստներէ և մանաւանդ ճերմակեղէն-  
ները մաշեցնող և ձեռքերու ալ փնասող անպատեհութիւններէ:

Ճերմակեղէններ, բրդեղէններ, սեղանի ու խոհանոցի անօթներ եւ այլն  
լուալու ու մաքրելու համար, ամենէն ընտիր միջոցն է այս գիւտը, որ մեծ  
առաւելութիւն մ'ալ ունի հականերիչ ըլլալով:

Փորձեցէք, բաղդատեցէք, միշտ պիտի գործածէք:

Լէսիվ անուանով մինչեւ հիմա տեսնուած ապրանքներէն զանազանելու  
համար պէտք է պահանջել բաքէթներու վրայ վերեւ դրուած ՄԱԺԻՔԻ և  
ՎԷՆՈՒՍի մարքանները, խարդախութիւն ընողը օրէնքով կը պատժուի:

Կը ծախուի մէկ գնով Պօլսոյ բոլոր արուարձաններու մէջ:

Կեդրոնատեղիներն են՝ Ղալաթեա Մոմհանէ Րիֆաթ խան, Թիւ 19, 20  
և Պոլիս Զընադգլեան խան, Թիւ 3, Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ վաճառա-  
տունն:

Դաւառաց համար գործակալութիւն կը տրուի, փափաքողները պէտք  
է դիմեն ընդհանուր Թուրքիոյ, Եգիպտոսի, Պուլկարիոյ, Ռումանիոյ և Սեր-  
պիոյ գործակալին, հետեւեալ հասցէով:

Պ. Սէֆերեան, Մոմհանէ, Րիֆաթ խան, Թիւ 19, 20 և Պոլիս, Ղալաթիա

Հանրապետական կը հրատարակուի ամեն Շաբաթ օր կանոնաւորապէս:  
կը պարունակէ Գրական, Դիտական, Երկրագործական, Տնտեսական, Արհեստական եւայլն, եւայլն շահեկան նիւթեր:  
Երկրագործական, Արհեստական եւ Իրաւաբանական հարցումներու միշտ պատասխանները կը տրուին մասնագէտներու ձեռքով:  
Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ.

### Տնօրէն-Խմբագրապետ Ղ. ԲՈԼԱՏ

Կ. Պոլիս, Մանուկ փառա, Գիւրգիս խան Արամեան Տպարան, քիւ 26

Թերթիս վերաբերեալ մնացեալ գործառնութեանց համար դիմել

### Դրավանաւ ՄԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՅՐԱՍ ԷՔԷՆՏԻԻ

Կ. Պոլիս, Մեհման Զարգար քիւ 57

Յետ այսու Հանրապետական հրատարակութեան մէջ սեւէ մասնակցութիւն չունենալով, կը խնդրեմ գործակալներէ ու յաճախորդներէ՝ որ Դրատանս վերաբերեալ յանձնարարութիւնները ուղղակի ինձ ընեն. իսկ թերթին վերաբերեալ խնդրոց համար դիմեն ուղղակի առ Մեծ. Վահրամ Էքէնտի Մարգարեան:

Դրավանաւ Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

Կ. Պոլիս, Զաւրագըլար-Խօզուճու քիւ 50

Հանրապետական պատրաստ է ընդունել ամեն տեսակ ծանուցումներ, ազդարարութիւններ, խիստ դիւրամատչելի պայմաններով: Հրատարակիչներէ կը խնդրուի իրենց երկերէն զրկել երկու օրինակ, զոր պիտի ազդարարենք հասարակութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը:

### ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

|                                               |                                     |
|-----------------------------------------------|-------------------------------------|
| ԱՅՆԹԱՊ. — Գարեգին էֆ. Պօղարեան                | ԿԻՐԱՍՈՐ. — Արմենակէֆ. Սօմունճեան.   |
| ԱՏԱ-ԲԱԶԱՐ. — Ստեփան էֆ. Սալիբեան              | ԿԵՍԱՐԻԱ. —                          |
| ԱՐԱԲԿԻՐ. — Յ. Պ. էֆ. Մանուկեան.               | ՄԱՐԱՇ. — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ. |
| ԱԹԵՆՔ. — Մկրտիչ էֆ. Մանուկեան.                | Վարժապետեան.                        |
| ԳՈՒՐՏ-ՊԷԼԵՆ. — Արժ. Տ. Ստեփան քահանայ Մկրեան. | ՄԱՆՁԵՍԹ. — Յակոբ էֆ. Բոլատեան.      |
| ԳԱՀԻՐԷ. — Մ. Պաղտասար էֆ. Ս. Նաթանեան.        | ՄԱՐՁՈՒԱՆ. — Յովհաննէս էֆ. Յակոբեան. |
| ԷՐՁՐՈՒՄ. — Եղ. էֆ. Տ. Աղարեան.                | ՄԱՐՍԻԼԵԱ. — Նազարէթ էֆ. Զարգարեան.  |
| ԹԵՂՐԱՆ. — Կարապետ էֆ. Բաբարեան.               | ՄՈՒՇ. — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան.    |
| ԻԶՄԻՐ. — Կարապետ էֆ. Մալէճանեան.              | ՊԱՆՏՐՄԱ. — Արմենակ էֆ. Ս. Մարեան.   |
| ԻԶՄԻՏ. — Արաքամ էֆ. Կառնճեան.                 | ՊԱՐՏԻԶԱԿ. — Վահան էֆ. Ծլիունի.      |
| ՄԱԼԿԱՐԱ. — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան.            | ՊՐՈՒՍԱ. — Օննիկ էֆ. Լուիֆեան.       |
| ԽԱՐԱԲԵՐԴ. — Խոսրով էֆ. Բէշիլեան.              | ՌՈՏՈՍԹ. — Յովհաննէս էֆ. Տէմիրեան.   |
| ԿԵԼԻՊՈԼՈՒ. — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան.        | ՍԱՄՍՕՆ. — Կարապետ էֆ. Սէֆերեան.     |
|                                               | ՍԵՎԱԶ. — Յ. էֆ. Կարակոչեան.         |
|                                               | ՏՐԱՊԶՈՐ. — Սահակ էֆ. Էթմէքճեան.     |

Հանրապետական կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար Լանկա, Խաչիկ էֆ. Ֆէսճեան Դեղարանը:  
Սամաթիա, Կայարանը Թիւթիւնճիւ Արթին աղաի խանութը:  
Մագրի-Դիւղ, Պօղոս էֆ. Աղնաւորեանի խանութը:  
Դատը-Դիւղ, Լեւոն էֆ. Զպուքճեան Դեղարանը:  
Սկիւտար, Փիլիթօֆճեան էֆ. ի խանութը:  
Բերա, Մեծ փողոց Դառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: